

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 2019 տարւոյ ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերու տրուած հետեւեալ բարեպաշտական նուէրները:

1. Կ. Պոլիսէն Տիար Նշան Մուրատօղլու, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ փոքր խնկաման մը՝ յիտատակարանով:

(Յունուար)

2. Հայաստանէն Տիկ. Շուշան Յովհաննիսեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ աղամանդակուռ մատանի մը:

(Մարտ)

3. Կ. Պոլիսէն Տիար Սարօ Պօյաճեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ չորս խաչերով եւ բուսականութեամբ ներկուած կարմիր թաւեայ գորփորայ մը:

4. Մի ոմն, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ կլորաձեւ, փուլերով, խաչազարդ սկիհի ծածկոց մը եւ նոյն ոճով կարուած խաչի բռնիչ մը:

5. Կ. Պոլիսէն Տէր եւ Տիկ. Օհաննէս եւ Յասմիկ Ուղուրկել, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն 1969-ին երուսաղէմ տպուած կարմիր թաւեայ, ոսկեզօծ-արծաթապատ ճաշու Աւետարան մը:

6. Տիրամայր Լուսինէ Աթաշանեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ ճերմակ յատակի վրայ, խաչերով եւ բուսական մոթիւններով զարդարուած շուրջառ մը՝ առանց ճարմանդի, փորուրար մը, զոյգ բազպաններ, եւ գօտի մը՝ առանց ճարմանդի: Ինչպէս նաեւ դպիրի երեք շապիկ՝ կանաչ յատակի վրայ, դեղին շապիկ մը եւ մարգարիտներ:

7. Հայաստանի Երեւան քաղաքէն Տիար Արմէն Սեդրակեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ արծաթեայ փոքրիկ խաչ մը:

8. Հայաստանի Երեւան քաղաքէն Տիկ. Վերգինէ Մովսիսեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի ապարանջան մը:

9. Կրասնատարէն Տիկ. Մարեթա Պօղոսեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ կանաչ քարով ոսկի մատանի մը:

(Ապրիլ)

10. Մի ոմն, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ երկու ոսկի մատանի:

11. Վիենայէն Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Սոնիա Ճորոխեաններ, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն նշանախօսութեան քսան եւ հինգ զոյգ արծաթեայ մատանի:

(Մայիս)

12. Հայաստանին Տիկ. Ռուզաննա Անդրէասեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի մատանի մը՝ մանր ադամանդէ քարերով:

13. Ռուսիայէն Անահիտ Մանուկեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի խաչ մը՝ մանր ադամանդէ քարերով:

14. Տիար Լաւրենթի Միքայէլեան եւ Տիկ. Կարինէ Մրկտչեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրեն ոսկի հաստ շղթայ մը:

(Յունիս)

15. Սաղիմաբնակ Տէր եւ Տիկ. Զօզէֆ Գասապեաններ եւ Կ. Պոլիսէն Տէր եւ Տիկ. Յակոբ Գոզանեաններ, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն 60 հատ ճարմանդ:

16. Եաֆայէն Տիար Տիգրան Թորոսեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ արծաթեայ ոսկեզօծ հին ձեռաց խաչ մը, որուն ակին մէջ գրուած է հետեւեալ յիշատակարանը. «Մասն Սուրբ Կարապետու ի նուիրակ Աբրահամ եպիսկոպոսէ Երուսաղէմ յիշատակ Արմաշու Վանուց առաջնորդն Պօղոս եպիսկոպոսին Թ.Մ.Հ.Գ. (1274+551=1824)»:

(Սեպտեմբեր)

17. Հայաստանի Մասիս քաղաքէն Քնարիկ Խաչատրեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի խաչ մը:

18. Հոլանտայէն Գեղեցիկ Գալստեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի շղթայով խաչ մը:

19. Հայաստանի Երեւան քաղաքէն Գայիանէ Յովհաննիսեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ Աստուածածնայ եւ Յիսուսի պատկերով ոսկի մետալիոն մը:

20. Հայաստանի Երեւան քաղաքէն Մարինէ Աւոյեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի շղթայ մը:

21. Ամերիկաբնակ Աստղիկ Անտոնեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի շղթայով ձուլակտոր մը:

22. Լոս Անճէլըսէն Թերեզա Զաքարեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի շղթայով ձուլակտոր մը:

23. Հայաստանի Երեւան քաղաքէն, Ճուլիանա Յարութիւնեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ճերմակ ոսկի մատանի մը՝ ադամանդէ քարերով:

24. Հայաստանի մայրաքաղաք Երեւանէն Լուսինէ Զաքարեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ կանաչ քարով ոսկի մատանի մը:

(Նոյեմբեր)

25. Մոսկուաբնակ Տիկ. Լուսինէ Աթաջանեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի

«Գեղեցիկ Աստուածածնի» պատկերին կը նուիրէ կարմիր վարագոյր մը:

26. Պոլսահայ ուխտաւորներ եւ Տիար Մկրտիչ Սերթշիմէք, Յոպպէի Ս. Նիկողայոս հայոց վանքին կը նուիրեն բուրվառ մը, Ս. Սեղանի փայտեայ, ոսկեզօծ երեք խաչ, պսակադրութեան թագեր, երկու աշտանակ, Միւռնոնաթափ Աղանի մը եւ պատարագիչի գօտիի ամրակ մը:

27. Հայաստանի մայրաքաղաք Երեւանէն Տիար Եփրեմ Տէրտէրեան, Սբ. Հրեշտակապետաց վանքին կը նուիրէ պատարագիչի երեք լման զգեստ (կարմիր, կապոյտ, կանաչ): Փորուրարներ, բազպաններ, գօտիներ, վակասներ եւ հողաթափեր ասեղնագործ են:

(Դեկտեմբեր)

ՍԵԻԱՆ ԱՐՔ. ՂԱՐԻՊԵԱՆ

Լուսարարապետ Ս. Աթոռոյ

ԵՐԱՆԻ ՈՐ ՈՒՆԻՑԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ

